Հայտարարություն «Հետաքննող լրագրողներ»-ի նախագահ Էդիկ Բաղդասարյանի վրա հարձակման կապակցությամբ

Նոյեմբերի 18, 2008

2008 թ. նոյեմբերի 17-ի երեկոյան Երեւանում հարձակման եւ ծեծի է ենթարկվել «Հետաքննող լրագրողներ» ՀԿ նախագահ եւ «Հետք» էլեկտրոնային թերթի գլխավոր խմբագիր Էդիկ Բաղդասարյանը: Լրագրողը ստացել է ուղեղի ցնցում, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնում նրա գլխին մի քանի կար են դրել:

Էդիկ Բաղդասարյանին նախկինում էլ սպառնացել են, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ այս հարձակումն անմիջական կապ ունի նրա մասնագիտական գործունեության հետ:

Արդեն որերորդ դեպքն է, որ լրագրողները ենթարկվում են ստոր հաշվեհարդարի, իշխանությունները հավաստիացնում են, թե ամեն ինչ անելու են չարագործներին հայտնաբերելու համար, սակայն հանցագործությունները մնում են չբացահայտված, կատարողներն ու կազմակերպիչները՝ անպատիժ: Եվ այդ անպատժելիությունը արձակում է նրանց ձեռքերը, ովքեր կցանկանային լռեցնել ազատ խոսքը:

Մենք դատապարտում ենք այս բռնարարքը եւ կոչ ենք անում իշխանություններին՝ հերթական անգամ սին խոստումներ տալու փոխարեն բացահայտել հանցագործությունն ու պատժել մեղավորներին:

Երեւանի մամուլի ակումբ
Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե
Մամուլի աջակցության «Ինտերնյուս» ՀԿ
Հայաստանի ժուռնալիստների միություն
«ԹԻՄ» հետազոտությունների կենտրոն
«Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ-Հայաստան» ՀԿ
Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ
«Ա1+» հեռուստաընկերություն
Հետաքննական լրագրության Scoop դանիական կազմակերպության հայաստանյան ներկայացուցչություն
Հայաստանի Հելսինկյան կոմիտե
Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
«Հանուն կայուն մարդկային զարգացման» ասոցիացիա